

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ «ԾԻԱԾԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ

Հանրահայտ է, թե գիտական ինչպիսի կարևորություն է ներկայացնում մեծ գրողների առանձին երկերի ստեղծագործական պատմության ուսումնասիրությունը: Գրականագիտական հետազոտության այդ եղանակը ոչ միայն բացահայտում է հեղինակի ստեղծագործական յուրահատկություններն ու «գաղտնիքները», այլև ցույց է տալիս նրա գաղափարա-գեղարվեստական մտածողության զարգացումը և մեծապես նպաստում այս կամ այն երկի գրական-պատմական արժեքավորմանը:

Այս իմաստով հետաքրքիր դիտարկումների նյութ է տալիս նաև Միսաք Մեծարենցի (1886—1908) բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Ծիածանը»:

1907 թ. ապրիլի 7-ին Կ. Պոլսի «Մասիս» շաբաթաթերթը զետեղեց խմբագիր Սնովք Արմենի «Մասիսի» մատենադարան» ծանուցումը, որտեղ կարդում ենք. «Մասիսի հրատարակության հետ, գրական ուղղությամբ հատորներով ալ Գիրքի աշխատություն մը մեջտեղ հանելու նպատակով, հաստատած ենք «Մասիսի» մատենադարան» անունով Շարք մը հրատարակություններու, ուր պիտի խմբվին գործերը մեր ծանոթ գրագետներուն և բանաստեղծներուն, գրական, ուսումնասիրական և բանաստեղծական նյութերու վրա: Այս շարքին առաջինը Ծիածան ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ հրապարակ կ'ելլե մոտ օրեն, արդեն տպագրությունը ավարտած ըլլալով»: Սակայն «Ծիածանը» շտպագրվեց հիշյալ մատենադարանով և նույն պարբերականը մայիսի 19-ին «Մեր կյանքեն» բաժնում հայտնեց. «Հրատարակվեցավ «Ծիածան» քերթվածներու գրքույկ մը, Միսաք Մեծարենցի: Ծանուցած էինք թեև թե՛ «Մասիսի» մատենադարանին» առաջին հատորը պիտի կազմե ան, սակայն տիրոջը հետ գեղարվեստական խնդրի մը մասին անհամաձայնության պատճառով, նախընտրեցինք Մատենադարանին չկցել հրատարակությունը»:

Երկու ծանուցումների միջև ընկած կարճ ժամանակահատվածում տեղի ունեցավ մի միջադեպ, որն ըստ էության սկզբնավորեց «Ծիածանի» ու հատկապես դրան հաջորդած «նոր տաղերի» շուրջը բորբոքված հայտնի վեճերը: Զմտնելով մանրամասնությունների մեջ, նշենք միայն երկու փաստ: Տարիներ անց Ե. Արմենը «Հուլեր արևմտահայ մամուլի կյանքեն» անտիպ աշխատության մեջ այսպես է բացատրել «Ծիածանը» «Մասիսի» մատենադարանով՝ չհրատարակելու իրողությունը. «Մասիս» համաձայնելով որ «Մասիսի» մատենադարան» հովանիով ներկայանա ան (ժողովածուն—Ա. Շ.) ընթերցող հասարակության, կը գրե հրատարակչի առաջաբան մը որ կը շարվի և հեղինակին կը ցուցվի: Բանաստեղծին նախագահությունով կազմված

քառանդամ դրական «միաբանությունը»¹ վանական նիստի մը մեջ հառաջաբանը պետք եղած չափով փառաբանական չի գտներ և կը մերժե անոր թևարկությունով գրքույկին լույս ընծայումը»²: Ե. Արմենի ծառայությունից հրաժարվելու իրական շարժառիթը հրապարակորեն նշել է ինքը՝ Մեծարենցը, «Քննադատությունը» հոդվածում: Ակնարկելով «Մասիսի» երկրորդ ծանուցումը, բանաստեղծը գրել է. «Երբ Ենովք Արմենի փափաքով... հոժարեցա «Մասիսի» մատենադարանին» մեջ հրատարակել Միաձանը՝ այս վերջինին կցվելու համար ազդ մը խմբագրեց «Մասիսի» խմբագիրը. այս ազդեն մաս մը և՛ արտագրեմ, իբրև նմուշ հեղինակին լեզվական գեղարվեստին. «...Հիմնած ենք «Մասիս»-ի Մատենադարանը, որուն լույս կ'ընծայենք Առաջին հատորը, Միաձան, իբր սկզբնավորություն Մատենադարանի շարքին»:

Ես չկրցա հանդուրժել այս ճռգած հայերենով ազդին՝ զոր Ենովք Արմեն կ'ուզեր անպատճառ գետեղել գրքին ճակատը... Եվ այս ազդն է, որ Ենովք Արմենի գրչին տակ գեղարվեստական խնդիր դարձած է»³:

Փաստը մնում է փաստ, որ Ե. Արմենի հետ ունեցած բախումը այսպես թե այնպես ուշացրեց «Միաձանի» լույսընծայումը: Բայց մինչ այդ էլ ժողովածուի տպագրությունը ձգձգվել էր, և դրա համար կար ավելի զորեղ խոչընդոտ՝ թուրքական գրաքննությունը: Այդ մասին Թ. Ազատյանը գրում է.

«Տարի մը առաջ գրեթե պատրաստ էր Միաձանի ձեռագիրը. ան հրապարակ պիտի ելլեր 1906-ին, եթե հրատարակչական դժվարություններ չծագեին»:

Գրաքննությունը չարտոներ «Միաձան»-ի անունը Ոսկի աբիշին տակ դնելու:

Տպագրությունը երբ կը հանձնվի Ռ. Սազայանի—բանաստեղծուհեն շատ հեռի մեկը—ան շուգեր իր ծախքով տպել գիրքը, հրատարակիչը՝ համաձայնելով հեղինակին հետ, մաս առ մաս և ժամանակին հետ ամբողջությամբ կը վճարե դրամը: Գրքին հրատարակության արտոնությունը ձեռք բերելու և ձեռագիրը մեարիֆեն շուտով առնելու համար մեծ օգտակարություն կունենա Սազայան»⁴:

Շահեկան որոշ մանրամասնություններ ենք գտնում Վ. Թաթուլի ժողովածուներից մեկին կցված Ա. Զոպանյանի առաջաբանում: Անշուշտ, օգտվելով Վ. Թաթուլի վկայություններից (նա եղել է գրողի դասընկերը Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում), Զոպանյանը հայտնում է, որ Մեծարենցը ցանկացել է «Միաձանը» հրատարակել ընկերոջ «Լուսնին տակ երգեր» շարքի

¹ Մեծարենցից բացի հավանաբար նկատի ունի Վահրամ Թաթուլին, Գեղամ Բարսեղյանին և Արամ Անտոնյանին:

² Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ե. Արմենի ֆոնդ, էջ 108:

³ Միսաք Մեծարենց, Երկերի ժողովածու, Երևան, 1956, էջ 286—287: Սույն ժողովածուն առաջին անգամ լույս է տեսել 1934-ին՝ Վ. Նորենցի ու Վ. Ալազանի աշխատասիրությամբ: Երկու հրատարակություններն էլ ունեն ծանոթագրություններ, որոնց մեջ, ի դեպ, ցույց են տրված նաև «Միաձանի» բոլոր այն բանաստեղծությունները, որոնք նախապես տպագրվել են մամուլում և մեծ մասամբ մատնանշված են դրանց բնագրային տարբերությունները: Մենք օգտվում ենք երկրորդ հրատարակությունից՝ էջերը մատնանշելով շարադրանքի մեջ:

⁴ Թորոս Մ. Ազատյան, Միսաք Մեծարենց (իր կյանքը), հատ. I, Կ. Պոլիս, 1922, էջ 38:

հետ «միևնույն գրքույկին մեջ»։ «Այդ երկու շարքերուն ձեռագիրները,—պատմում է Զոպանյանը,—հանձնած էին գրաքննիչ Գրիգոր Ոսկյանին. շնորհիվ կատարված ազդու միջամտության մը, հիվանդ Մեծարենցին ձեռագիրը շնորհ կը գտներ գրաքննության մոտ և կարտոնվեր հրատարակության...»։ Հետագա շարադրանքից երևում է, որ Մեծարենցի ժողովածուն ևս գրաքննիչին «խրթին, մանվածապատ» է թվացել ու ենթադրել է տվել, թե «հոգ թաքուն քաղաքական վտանգավոր ակնարկություններ կային»⁵։

Մի կարևոր վավերաթուղթ ևս անառարկելիորեն ապացուցում է, որ «Ծիածանը» իրոք 1906-ին պատրաստ է եղել հրատարակության։ Խոսքը վերաբերում է Մեծարենցի «Ինքնադատության փորձ մը» հոդվածին, որ հեղինակի խոստովանությամբ գրված է 1906-ի հոկտեմբերին։ Ժողովածուի տպագրության գործը համարելով լուծված, Մեծարենցը մտադիր է եղել այդ հոդվածը ևս հանձնել տպագրության այն հույսով, որ «թերևս նոր կողմնալույսեր կարենա սփռել մութ մնացած անկյուններու մեջ» (էջ 270)։

Արդյոք նույնակա՞ն են «Ծիածանի» ձեռագիր (1906) և տպագիր (1907) ժողովածուները։ Այս հարցը բնավ չի հետաքրքրել ուսումնասիրողներին։ Մինչդեռ բաղմամբիվ փաստեր ցույց են տալիս, որ տպագիր ժողովածուն ձեռագրի համեմատությամբ ունի մի շարք, հաճախ էական տարբերություններ։ Մեծարենցը, որին հատուկ էր ստեղծագործական պահանջկոտությունը, տեսնելով, որ «Ծիածանի» տպագրությունը ձգձգվում է, 1906-ի հոկտեմբերից հետո խմբագրել է ժողովածուն, հանել ւռնանձին բանաստեղծություններ, բարեփոխել շատ տողեր։ Այդ եղրակացությանն է բերում «Ինքնադատության փորձ մը» հոդվածի ուշադիր քննությունը։

Այս հոդվածում գրողը իր բանաստեղծությունները բաժանում է երկու՝ «սկզբնական» կամ «խարխափանքի» և «քիչ թե շատ գիտակից ու ինքնավստահ» շրջանների, վկայակոչում առանձին գործեր, կատարում մեջբերումներ։ Հենց հեղինակային այդ փաստարկումներն են, որ բանասիրական դիտողությունների հնարավորություն են ընձեռում։

Նախ նշենք երկու փաստ, որոնք վերաբերում են «կանխագույն ոտանավորներին»։

Խոսելով «ինքնության դրոշմ» շունեցող գործերի մասին, բանաստեղծը որպես ապացույց բերում է հետևյալ հատվածը.

Ո՞վ, արդյոք ո՞վ,
Պիտի տանի սրտես հեռու
Վայելքն աղու
Գրկանքներու
Որոնց հոգիս հափրանքն ունի (էջ 273)։

Այսպիսի տողեր չկան ո՛չ «Ծիածանի», ո՛չ էլ Մեծարենցի կենդանության օրոք կամ ետմահու հրապարակված բանաստեղծություններում։ Ուրեմն սա հետազոտողներին անհայտ ստեղծագործություն է։

Այնուհետև, առարկելով քննադատներից մեկին, որն «Ա՛ն իմ սիրտս է...» տաղը համարել է լավկանություն, Մեծարենցը վկայակոչում է մի քառատող.

⁵ Վ ա հ ր ա մ Թ ա թ ու լ, Հին ու նոր տաղեր, 1907—1940, Փարիզ, 1941, էջ 8—9։

⁶ Միայն «Ծիածանի», «Աշնանային հեծություններ» բանաստեղծության վերջին «Հոգիս հիմակ հափրանքն ունի» տողն է հիշեցնում հիշատակված հատվածի վերջին տողը։

... թույլ խաղերու մեղկութիւններ չունի ան,
Այլ կը սահին հզոր կուրծքին բոլոր ձայներ,
Բամբ թառանչներ՝ հոծ ու մռայլ
Հովն երբ պոնդեր կուտա նամետ գիշերին (էջ 274):

«Ա՛ն իմ սիրտս է...» բանաստեղծութիւնը տպագրվել է 1904-ին («Մասիս», թիվ 46, էջ 272), բայց բերված տողերի փոխարեն հրատարակված օրինակում կարգում ենք.

Որուն հզոր լարերուն մեջ բնավ չկան
Հեշտութիւնն ու մեղկ գովանքը թույլ խաղերու,
Այլ կը դողան հեծքով անթիվ հոն ձայներ,
Հովն երբ պոնդեր կուտա տամուկ գիշերին (էջ 202):

Անհամապատասխանութիւնն ակներև է: Բայց ե՞րբ և ինչպե՞ս է ստեղծվել տարբերակը, գարծյալ անհայտ է:

Գալով երկրորդ շրջանի բանաստեղծութիւններին, պետք է նկատել, որ սրանք հենց այն գործերն են, որոնց Մեծարենցը կարևորութիւն է տվել և ընտրողաբար ղետեղել «Ծիածանի» ձեռագիր ժողովածուում: Համեմատութիւնը, սակայն, պարզում է, որ հեղինակը, տպագրութեան հանձնելով «Ծիածանը», դուրս է թողել երեք բանաստեղծութիւն: Նա «Սիրերգ» և «Վերադարձի երգ» տաղերի հետ միասին «Պետրոս Դուրյանը» նույնպես համարել է երկրորդ շրջանի ծնունդ, գրելով, որ դրանք «եթե ոչ հասարակ, գեթ հասարակ կերպով արտահայտված են» (էջ 276): Մեծարենցը տպագիր ժողովածուում ամփոփեց առաջին երկուսը, իսկ «Պետրոս Դուրյանը» մնաց «Մասիս» էջերում (1905, թիվ 6, էջ 94): Առավել հետաքրքիր են մյուս երկու բանաստեղծութիւնները, որոնք երբեք չեն հրատարակվել: Առաջինը խորագրված է «Դեպի մոռացում», որից հեղինակը բերել է միայն երեք տող.

Ու թող նշուի բաղձիկ հոգվույս մեջ,
Ճառագայթը նախածին,
Վաղորդայններու քրքում արեին (էջ 278):

Իսկ երկրորդ «Դաշտերու մեջ» վերնագրով բանաստեղծութիւնը Մեծարենցը համարել է «աղատ ոտանավորի նմուշ»՝ նշելով, որ այն «խճողված թանձրութիւն մը ունի»: Իբրև ապացույց վկայակոչված են այս տողերը.

Կյանքի թարմ կաթը ծծելու
Հեշտին այգուն ստինքներ են քաղցրածոր (էջ 279):

Ո՛չ այս, ո՛չ էլ վերը բերված տողերը չեն հանդիպում Մեծարենցի բանաստեղծութիւններում, այնպես որ «Դեպի մոռացումն» ու «Դաշտերու մեջը» ուսումնասիրողներին անժանոթ ստեղծագործութիւններ են:

«Ինքնադատության փորձ մը» հոդվածում «Ծիածանի» ձեռագիր ժողովածուից Մեծարենցի արած մեջբերումները տպագիր ժողովածուի համապատասխան բանաստեղծությունների տողերի հետ բաղդատելիս նկատելի են հեղինակային մի շարք փոփոխություններ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի. ա) նախապես մամուլում հրապարակած բանաստեղծությունների սրբագրումներ և բ) առաջին անգամ «Ծիածանի» ձեռագիր օրինակում զետեղած գործերի սրբագրումներ:

Ստորև ցույց ենք տալիս երկու խմբի բնագրային բոլոր տարբերությունները. դրանք նշում ենք համապատասխան բառի վրա՝ տողի ընդգծումներով՝ ավարտուն (տպագիր ժողովածուի) ձևը առնելով ուղղանկյուն փակագծերում.

ա) ՆԱԽԱՊԵՍ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՈՐԾԵՐ

«Ցնորոտ անդորոնքսուններ»

13 Դաշտերուն վրա [մեջ] հարսնուկներու բոսոր իղձերը կը ցամքին.

«Երագի պահեր»

22 [Երկարածիգ] Մերթ լուսավետ [լուսավոր] ու մերթ անլույս՝.

38—39 Ու [Մինչ] կը հոսի գիշերն ինչպես ծով անհուն

Դեպի ափունքը երագիս [երագին].

«Ցայգն է պայծառ...»

4 կը մոտենան հոգվույս նորեն [Քնքշանքով զիս կը պարուրեն].

«Խոնջ իրիկունն արագորեն...»

9 Փակ են աչքերս, և կամ հանկարծ մերթ անհամբեր [անձկությամբ] դուրս կը նային.

«Թրթումներ»

15 Ըսպասումի [Յավոտ հոգվույս] մութին քով՝.

բ) ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԶԵՏԵՂՎԱԾ ԳՈՐԾԵՐ

«Տապի նուպաներ»

32 Բայց կը տևե դեռ ցորեկին [Յորեկին դեռ կը տևե] բազմալեզու տենդն հրավառ.

«Հովին անցք»

23—24 Ա՛հ, քուկդ եմ, ո՛վ ձայն, [եմ արդեն], ո՛վ միստիք ցնցում,
Մինչ դուն կաթոգին [Ո՛վ ձայն, մինչ ուժգին] հոգվույս կը փարիս...

«Չմրան պարզ գիշեր»

10. Կ'ուզեմ դադրին [մեռնին] տիվ ու ժամանակ.

7 Ձեռագիր ժողովածուի այս տողը համապատասխանում է «Մասիսում» տպագրված բանաստեղծության բնագրին («Մասիս», 1905, թիվ 5, էջ 73):

8 «Մասիսում» տպագրված բանաստեղծության մեջ (1905, թիվ 28, էջ 444) այս տողը նույնական է ձեռագիր ժողովածուի բնագրին:

«Նավակներ»

5 Գիշերները միշտ անհուն [Գիշերներն ես համբուն] կը սպասեմ ծիրանի ես
[այն / դարձին:

Անկասկած, հիշյալ օրինակներից բացի եղել են հեղինակային ուրիշ սրբագրումներ ևս, թերևս նաև այլ, անհայտ բանաստեղծություններ: Բայց այս մի քանի փաստերն անգամ ապացուցում են, որ «Ծիածանի» ստեղծագործական պատմությունն անցել է երկու փուլ. նախ ժողովածուն կազմելիս հեղինակը անտիպ գործերի հետ պարբերական մամուլում տպագրած 43 բանաստեղծություններից ընտրել է 22 տաղ, և ապա՝ արդեն հրատարակության պատրաստ ժողովածուն, տպագրության ձգձգման ժամանակամիջոցում, 1906-ի հոկտեմբերից հետո, նորից է վերանայել, դուրս է թողել առնվազն երեք և սրբագրել ամենաքիչը ինը բանաստեղծություն:

ИЗ ТВОРЧЕСКОЙ ИСТОРИИ
СБОРНИКА МИСАКА МЕЦАРЕНЦА «РАДУГА»

А. С. ШАРУРЯН

(Резюме)

В 1907 г. вышел в свет первый сборник классика армянской поэзии Мисака Мецаренца «Радуга». Сборник был сдан в печать на год раньше, однако его издание задерживалось по цензурным и другим соображениям. В статье показывается, что после октября 1906 г. автор отредактировал рукопись «Радуги», исключив из сборника три стихотворения и внеся в текст ряд изменений.